

Թող ոստում մ'ընէ եւ ըլլայ օմտ կամ օտմ. ա-  
ղօտը՝ օտղա կամ օտաղ. մկօն՝ օմկ կամ օմլմ:  
Ապա թէ ոչ՝ Թող ո-ի փոխուին՝ որ հասկնան  
իրենց անձառութիւնը:

Տքթ. Թիրեաքեանն ալ ելեր Արիախայ բա-  
ռարան մըն է յօրիներ. տարլնեբոյլ աշխատեր՝  
քրտներ՝ կեանք մաշեցուցեր է հայ լեզուին  
օգտակար ծառայութիւն մը մատուցանելու  
համար. երջանիկ մարդ, հո՞գդ էր հատեր.  
չկրցա՞ր ա՛յդքան արթուն մտքովդ գուշակել՝  
մարդարէանալ թէ ի՞նչ բախտ էր վիճակուած  
այդ լեզուին: Ելեր ես հօր բառը կը մեկնես.  
գն. zavr կամ zavor, զաւր (ոյթ), գն. hu-ի  
հետ բարդուելով՝ կուտայ hu-zavr (h-զաւր):  
Քաջակորով, ուժեղ:

Տուած մեկնութիւնդ ահա ջուրն ինկաւ.  
Յանձնաժողովը կը յայտարարէ թէ ատանկ  
բառ գոյութիւն չունի. հօր է ան եւ ոչ թէ  
հօր. եթէ իրաւցնէ քաջակորով է՝ թող ցատ-  
քէ օ-ն, եւ ըլլայ օհօր կամ օհիր, այն ատեն  
ուժեղ կ'ըլլայ տուած մեկնութիւնդ:

Տխմար ֆրանսացիք ալ Paul կը գրեն.  
մարդի՛կ Աստուծոյ, չէ՞ք գիտեր որ այդ ձս=  
աւը՝ օ է, եւ բառամիջի օ-երը պէտք է ու ըլ-  
լան՝ ըստ վճռոյ մերոյս Յանձնաժողովոյ. ու-  
րեմն եթէ լուսաւորեալ ազգ էք՝ գրեցէք Pol.  
մենք Պաղոս կամ Պօղոսը ասկէ վերջ Պողոս  
պիտի գրենք...

Ո՞վ գարք... ո՞վ բարք...

3. Ե գիրը գրել բառերու սկիզբը, երբ  
յիւ պէս կը հնչուի (ես, երկու):

Կրնար ըսուիլ. Ե գիրը բառերուն սկիզբը  
կը բարեհաստինք իր ուղիղ ձեւին մէջ ձգել...  
Եւ մենք շնորհակալ ենք ի սրտէ, որ վերջապէս  
գոնէ ուղիղ դարձ մը ըրիք...

4. Ո գիրը գրել բառերուն սկիզբը երբ վն  
կը հնչուի (որ, որդի): Զեկուցանող մը առա-  
ջարկեց գրել վն (վոր, վորդի):

Հայ ֆաշիսթ մը չկա՞յ արդեօք Երեւա-  
նում՝ որ մէկ լիտք արկանեփայտի իւղ (իտ  
եաղը) խմցնէ այդ գեկուցանողին...

5. Վ գրել բառերու մէջ եւ վերջը, երբ վ  
հնչին կուտայ (ավազ, ազնիւ, հարված, նը-  
վէր):

(Թիւ 1-ի մէջ ներ կ'առաջարկուէր գրել,  
եւ հոս նվեր... Անգամ մ'ուղիղ ձամբէն մոլո-

րողը հարկաւ թէ սխալէ սխալ պիտի գլո-  
րի...):

Աստ Մալխասեան յաղթանակէ: 1913-ին  
երազ մըն էր տեսեր ինք, եւ ըստ այդ երազին  
սկսաւ վեւով գրել ըստը ւերը. հիմա կը պար-  
տադրուի ըստը ազգին՝ որ ոչխարաբար ըն-  
դունի Մալխասեանի ձախողը երազին անդրոյ-  
թը...

Մենք ուրեմն ավագ, ազնիւ, հարված,  
նվեր չենք գրեր, այլ աւագ, ազնիւ, հարուած,  
նուէր ազնիւ գրութեամբ: Մեր ուղղադրու-  
թիւնը ա, ե, ի ձայնաւորներէն վերջ ւ կը պար-  
տադրէ դնել 1500 տարիներէ ի վեր. իսկ բա-  
ղաձայնէ վերջ՝ ու. հարուած, նուէր: Այս մա-  
սին վերեւ խօսեցանք, դեռ վարն ալ պիտի խօ-  
սինք:

Գալով վեւին, զայն կը գործածենք նախ  
բառերու սկիզբը, երկրորդ բառերու մէջ ու գը-  
րէն վերջ. ծով ժողով, սովորոյթ, եւն.: Եր-  
րորդ՝ բարդութեանց մէջ՝ երբ յաջորդ բառը  
վեւով սկսող բառ մըն է. գորավար, գորք եւ  
վարել բառերէն. կարելիք՝ կարի եւ վերք բա-  
ռերէն, եւն.: Ասկէ դուրս մեզի համար վեւ  
գոյութիւն չունի եւ չի կրնար ունենալ...

Վեւ գրէն զատ մենք ունինք նաեւ ւ եւ ու  
գրերը՝ որոնց հնչումը իրենց բաղաձայնի երե-  
ւոյթին մէջ՝ մօտ է վեւին:

Մեր ւ-ը թէ՛ բաղաձայն է, թէ՛ ձայնաւոր  
է. ա, ե գրերուն քով միշտ բաղաձայն է, ի եւ  
ո ձայնաւորներէն վերջ երբեմն բաղաձայն եւ  
երբեմն ձայնաւոր:

Բաղաձայն է՝ երբ իրմէ վերջ արմատա-  
կան բաղաձայն չ'ունենար, այսինքն՝ բառն իր-  
մով կը լմնայ. ինչպէս, պատիւ, թիւ, հաշիւ,  
քիւ, անիւ, ազնիւ, կոիւ, ցրիւ, հրճիւ, իցիւ,  
հովիւ, խոիւ, տիւ, խտիւ, եւն.:

Մեր լեզուին յատուկ սքանչելի կանոնով  
մը՝ այս բոլոր իւերը ուի կը փոխուին բար-  
դութեանց եւ ածանցմանց ատեն. պատիւ՝  
պատառոյ, պատառական, թիւ՝ թուական,  
հաշուագէտ, անուաւոր, ազնուական, կուիւլ,  
ցրուել, հրճուիլ, հովուական, եւն., եւն.:

Այս ձեւերուն մէջ ալ ւ գրերը բաղաձայն  
են բոլոր: Ուին ոն երբեմն հնչման ատեն ինչ-  
պէս նաեւ տողադարձի եւ ոտանաւորներու  
մէջ ը-ի կը փոխուի. վերջին պարագային՝ կը  
գրենք ալ. այսինքն, երբ երկու բաղաձայնէ